



ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԻ, ՄՇԱԿՈՒՄ, ԳՆԱՅԱՏՈՒՄ ԵՎ  
ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

# ՀՖԿՍՊԻ դասախոսական կազմի ներքին վերապատրաստման դասընթացի ծրագիր

## Բովանդակություն

- I. Նախաբան*
- II. Կրթական ծրագրերի մշակում*
- III. Ուսումնառության վերջնարդյունքներ*
- IV. Թյունինգի մեթոդաբանություն*
- V. Դասավանդման եվ ուսումնառության մեթոդներ*
- VI. Ուսանողների չափանիշահեն գնահատումը*



# Բաժին I.

## Նախաբան



**QUALITY**

*...is everyone's  
responsibility.*

(Deming, W. Edwards)

A person is climbing a rock formation, silhouetted against a bright, hazy sky. Another person is visible at the bottom right, reaching up to assist the climber. The scene is set in a natural, outdoor environment with some vegetation visible in the foreground.

“If you want to go fast,  
go alone. If you want  
to go far, go together”


Ի՞նչ է որակավորումների ազգային  
շրջանակը:

Մտքե՛ր:



Ո Ա Շ


Ո Ն Շ



(ՈԱՇ)


**Կրթական տարբեր մակարդակների համար** սահմանված նկարագրիչներին համապատասխան **որակավորումների դասակարգման գործիք**, որի նպատակն է փոխկապակցել ազգային որակավորումները և համապատասխանեցնել աշխատաշուկայի և հասարակության պահանջներին դրանք դարձնելով թափանցիկ և հասկանալի:

# Որակավորումների ոլորտային շրջանակ



ՌՈՇ-ներ.

1. Կատարում
2. Հոգեբանություն
3. Ինֆորմատիկա
4. Ֆիզիկա
5. Ճարտարապետություն
6. Կրթություն (մանկավարժություն)
7. Իրավագիտություն
8. Կատարում



**ՌՈՇ**  
 Որակավորումների շրջանակ, որը որակավորումների ազգային շրջանակին համապատասխան **տվյալ մասնագիտական ոլորտի համար սահմանում է գիտելիքի, կարողությունների և հմտությունների անհրաժեշտ նվազագույն լրակազմը:**

ՌՅՇ-ը փոխարկման գործիք է, որը ապահովում է փոխհամադրելիություն տարբեր երկրների շրջանակների միջև:



# Ի՞նչ է որակավորումների եվրոպական շրջանակը

## Որակավորումների փոխարկման գործիք

Հնարավորություն է տալիս համադրել տարբեր երկրների որակավորումները

## Որակավորման նկարագրություն

Ի՞նչ գիտի, հասկանում է և կարող է անել շրջանավարտը

## Կրթական ծրագրերի մշակման համար հենք

Յուրաքանչյուր մակարդակում սահմանված են այդ մակարդակի նկարագրիչները՝ արտահայտված ուսումնառության վերջնարդյունքներով գիտելիք, հմտություն և կարողություն տիրույթներում

## Որակավորումների ճանաչման դյուրինացում

Համադրելիություն ուսումնառության վերջնարդյունքների և հատկացված ԿՓԵՀ կրեդիտների հենքի վրա

## Տեղանք ուսումնառության ապահովման կարևոր գործիք

Հնարավորություն է տալիս որակավորումը ձեռք բերել տարբեր ճանապարհներով, տարբեր հաստատություններում և տարբեր երկրներում:



# Որակավորումների եվրոպական շրջանակ

**Knowledge**

**Skills**

**Competences**

Autonomy and responsibility

	Knowledge	Skills	Competence
<b>Level 1</b>	<b>Knowledge</b> In the context of EQF, knowledge is described as theoretical or experiential.	<b>Skills</b> In the context of EQF, skills are described as cognitive (involving the use of logical, creative and creative thinking) and practical (involving manual dexterity and the use of methods, materials, tools and instruments).	<b>Competence</b> In the context of EQF, competence is described in terms of responsibility and autonomy.
Level 1 The learning outcomes relevant to Level 1 are:	• basic general knowledge • basic technical knowledge of a field of work or study	• basic cognitive and practical skills, essential to carry out relevant information in order to carry out tasks and to solve routine problems using simple rules and tools	• work in study within their appropriate institutional context • work in study within their appropriate institutional context
<b>Level 2</b>	• knowledge of facts, principles, processes and general concepts, in a field of work or study	• a range of cognitive and practical skills required to accomplish tasks and solve problems by searching and applying facts, methods, tools, materials and instruments	• take responsibility for completion of tasks in work or study • adapt own behaviour to circumstances in solving problems
Level 2 The learning outcomes relevant to Level 2 are:	• knowledge of facts, principles, processes and general concepts, in a field of work or study	• a range of cognitive and practical skills required to generate solutions to specific problems in a field of work or study	• exercise self-management within the parameters of work or study contexts that are usually predictable, but are subject to change
<b>Level 3</b>	• comprehensive, specialist, technical and theoretical knowledge of a field of work or study and an awareness of the basic knowledge	• advanced basic, administrative, technical and theoretical, specialist skills complex and sophisticated problems in a specialist field of work or study	• take responsibility for the achievement of work or study activities • engage and cooperate in contexts of work or study • contribute to organisational design
Level 3 The learning outcomes relevant to Level 3 are:	• comprehensive, specialist, technical and theoretical knowledge of a field of work or study and an awareness of the basic knowledge	• advanced basic, administrative, technical and theoretical, specialist skills complex and sophisticated problems in a specialist field of work or study	• manage performance of self and others • manage organisational or professional activities in projects, taking responsibility for decision-making in unpredictable work or study contexts
<b>Level 4</b>	• highly specialised knowledge, some of which is at the forefront of knowledge in a field of work or study, on the basis of original thinking and/or research	• specialist problem-solving skills required in research and/or innovation in order to develop new knowledge and procedures and to integrate knowledge from different fields	• manage and coordinate work or study contexts that are complex, unpredictable and require new strategic approaches • take responsibility for contributing to professional knowledge and practice and/or for enhancing the strategic performance of teams
Level 4 The learning outcomes relevant to Level 4 are:	• highly specialised knowledge, some of which is at the forefront of knowledge in a field of work or study, on the basis of original thinking and/or research	• specialist problem-solving skills required in research and/or innovation in order to develop new knowledge and procedures and to integrate knowledge from different fields	• exercise self-management within the parameters of work or study contexts that are complex, unpredictable and require new strategic approaches
<b>Level 5</b>	• knowledge of the most advanced frontier of a field of work or study and/or the frontier between fields	• the most advanced and specialised skills, and techniques, including scientific and evaluation, required to solve critical problems in research and/or innovation and to extend and validate existing knowledge in professional practice	• demonstrate substantial authority, innovation, autonomy, initiative and professional integrity and sustained commitment to the development of new ideas or processes in the frontier of work or study contexts including research
Level 5 The learning outcomes relevant to Level 5 are:	• knowledge of the most advanced frontier of a field of work or study and/or the frontier between fields	• the most advanced and specialised skills, and techniques, including scientific and evaluation, required to solve critical problems in research and/or innovation and to extend and validate existing knowledge in professional practice	• demonstrate substantial authority, innovation, autonomy, initiative and professional integrity and sustained commitment to the development of new ideas or processes in the frontier of work or study contexts including research

**Descriptors**

**Level 8**



## Մակարդակից մակարդակ անցումը կապված է.

- Բարդության խորացմամբ, որը ներկառուցված է բոլոր երեք տիրույթներում.
  - Գիտելիք. գիտելիք ստանալուց մինչև գիտականություն
  - Կարողություններ. Խնդիրներ լուծելու բարդություն
  - Կոմպետենցիա (ինքնավարություն և պատասխանատվություն).  
անկանխատեսելիության և փոփոխության մակարդակը  
համապատասխան համատեքստում





ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ՈՐՄԱ

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
Ի ՐԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

ՃԱՆԱԳՈՒՄ

ՎԵՐՋՆԱՐԳՅՈՒՆՔԸ  
ՈՐՊԵՍ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔ


ՍԿՅԱՆՍ  
ՈՒՍՈՒՄՆԱԳՈՒԹՅՈՒՆ

ԱԶԱՏ ՄՈՒՏՔ ԵՎ  
ԵՆՔ

# Բաժին II

Կրթական ծրագրերի մշակում



- 
- Կրթական ծրագրերի մշակում
  - Ուսումնառության վերջնարդյունքների ձևավորում
  - Դասավանդման մեթոդներ և գնահատում

Կարևորագույն հարցը, որ պետք է փրվի ուսանողին կամ շրջանավարտին ոչ թե այն է, թե ինչ է նա արել որակավորումը ստանալու համար, այլ թե ինչ կարող է նա անել որակավորումը ստանալուց հետո:

Շտուսքար, արդյունահեն կրթական ծրագիր կազմելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունի ծրագրի հետևյալ երեք հանգուցային տարրերի փոխհամաձայնեցվածությունը.

1. ծրագրի նպատակ և ակնկալվող կրթական վերջնարդյունքներ,
2. դասավանդման և ուսումնասության մեթոդներ, որոնք նպատակաուղղված են ուսանողի կողմից այդ կրթական վերջնարդյունքները հաջողությամբ ձեռք բերելուն,
3. գնահատում, որը չափում է ուսանողի կողմից այդ վերջնարդյունքների ձեռքբերման որակական և քանակական մակարդակը:

Կրթական ծրագրի նկարագիրը կազմելիս անհրաժեշտ է.

- Աշխատաշուկայի հետազոտությունը.
    - աշխատանքի նկարագրությունները, առաջիադացման հեռանկարով:
    - Որակավորումների շրջանակները, Եվրոպական, ազգային, նյուդային, ինստիտուցիոնալ
  - Առաքելության ձևակերպումը.
  - Ֆակուլտետը, ռազմավարությունը
  - մտազրոհի կազմակերպումը ենթադրյալ ծրագրի շրջանավարտների ներկայիս և ապագա հնարավորությունների շուրջ,
  - գոյություն ունեցող տարբերությունների բացահայտումը, մասնավորապես՝ գիտելիքների, հմտությունների և կարողությունների առումով,
  - որակավորումների շրջանակի բնութագրիչների կիրառումը՝ տվյալ գաղափարները հիմնավորելու համար,
- շուրջ 10-12 առանցքային վերջնարդյունքների բացահայտումը, որոնք այս փորձագետները կարևոր են համարում յուրաքանչյուր հնարավոր որակավորման աստիճանի շրջափուլի համար,
- ուղղահայաց ուղղությամբ գիտելիքների, հմտությունների և կարողությունների (ԳՀԿ) ծրագրի միասնական ուղղվածության ապահովման ստուգումը:





# Արդյունահեն կրթական ծրագրի նախագծման և մշակման սկզբունքները



Յուրաքանչյուր կրթական ծրագրի մշակման հիմքում պետք է դրվի ծրագրի (որակավորման) պրոֆիլը: Որակավորման պրոֆիլը աշխատաշուկայում շրջանավարտի ապագա գրադվածության ընդհանուր նկարագիրն է, որն արտահայտում է հասարակության ներկայիս պահանջմունքները: Գործնականում հասարակության պահանջմունքները հիմնականում արտահայտում են ինչպես ուսանողներն ու ակադեմիական հանրու-

թյունը, այնպես էլ արտաքին շահագրգիռ կողմերը՝ գործատուները, շրջանավարտները և մասնագիտական հանրությունը: Այս խմբերից յուրաքանչյուրը որոշակի դեր ունի կրթական ծրագրի իրականացման արդյունքում ձևավորվող ընդհանրական և բուն մասնագիտական կոմպետենցիաների (կրթական վերջնարդյունքների) կազմի որոշման գործընթացում:

Ծրագրի պրոֆիլը սահմանում է վերջինիս նպատակներն ու խնդիրները, որոնք առավել հստակ կարելի է ձևակերպել ակնկալվող կրթական վերջնարդյունքների տեսքով: Ծրագրի պրոֆիլի հետ առնչվում են նաև ուսումնական պլանի կառուցվածքը և բովանդակությունը, դասավանդման, ուսումնաստության և գնահատման ձևերն ու մեթոդները: Կրթական ծրագրի պրոֆիլը ներկայացնելու համար անհրաժեշտ են հետևյալ բնութագրերը.


1. կրթական ծրագրի և շնորհվող որակավորման պաշտոնական անվանումները,



- բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչները,
- Հարատև (ցկյանս) ուսումնառության որակավորումների եվրոպական շրջանակը,
- Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) որակավորումների շրջանակը (Դուբլինյան բնութագրիչները)
- ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակը,
- ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ոլորտային (սեկտորիալ) շրջանակները (եթե առկա են տվյալ ոլորտում),
- համապատասխան մասնագիտական կազմակերպությունների, կառույցների, ընկերակցությունների, միությունների, օրենսդիր և ոլորտը կարգավորող մարմինների պահանջները և ցուցումները (եթե այդպիսիք կան),
- վերագգային մակարդակում սահմանված առարկայական կողմնորոշիչները (ինչպես, օրինակ, տարբեր առարկայական ոլորտների համար սահմանված բրիտանական ծրագրային հենանիշները/բենչմարկները, ճարտարագիտական մասնագիտությունների ծրագրային հավատարմագրման ամերիկյան չափորոշիչները և այլն),
- ՀՀ-ում մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրման չափանիշները և չափորոշիչները,
- արտասահմանյան առաջավոր համալսարանների համանման կրթական ծրագրերը և առնչվող այլ փաստաթղթեր:

Արդյունահեն կրթական ծրագրերի նախագծման, մշակման , իրականացման և որակի բարելավման համար անհրաժեշտ է

1. Տվյալ կրթական մակարդակի (բակալավր/մագիստրոս) և մասնագիտական ոլորտի համար որակավորումների եվրոպական, ազգային և ոլորտային (սեկտորիալ) շրջանակների պահանջների (նկարագրիչների) ուսումնասիրում:
2. Ծրագրի պրոֆիլի (մասնագիտական ուղղվածության) նկարագրություն (առաքելություն, նպատակներ, խնդիրներ, առանձնահատկություններ):
3. Ծրագրի սոցիալական կարիքի/պահանջարկվածության բացահայտում բոլոր շահակիցների մասնակցությամբ (աշխատաշուկայի ներկայացուցիչներ, ոլորտը կարգավորող մարմիններ, ուսանողներ, դիմորդներ, ծնողներ և այլն):
4. Ծրագրի ակադեմիական հիմնավորում տվյալ ոլորտի մասնագիտական և գիտակրթական (այդ թվում՝ միջազգային) հանրության հետ խորհրդատվական գործընթացի իրականացման միջոցով:



**Նկար 1.** Կրթական ծրագրի նախագծման, մշակման, իրականացման և որակի շարունակական բարելավման գործընթացների շրջափուլերը




Կրթական ծրագրի նպատակները լայն և ընդհանրական ձևակերպումներ են ուսուցման և դասավանդման մտադրությունների վերաբերյալ: Դրանք սովորաբար ընդհանուր գծերով մատնանշում են, թե ինչ է դասավանդվելու ծրագրի շրջանակներում: Նպատակները սովորաբար կարևորվում և ձևակերպվում են դասախոսի տեսանկյունից՝

մատնանշելով ծրագրի ամենակարևոր դրույթները, ընդհանուր ուղղվածությունը և բնութագրական առանձնահատկությունները:

Բոլոր կրթական ծրագրերը պետք է ունենան հստակ սահմանված նպատակներ՝ ձևակերպված հակիրճ և շարադրված ուսանողին հասկանալի լեզվով: Դրանք ընդհանուր գծերով նկարագրում են այն մասնագիտական որակները, որոնք ձեռք են բերում ծրագիրն ավարտող ուսանողները:

Սովորաբար, 2-4 նպատակների թվարկումը միանգամայն բավարար է կրթական ծրագրի ընդհանուր դրույթները և բնութագրական առանձնահատկությունները ներկայացնելու համար: Ցանկալի է նպատակների ձևակերպումը սկսել հետևյալ ելակետային դրույթով՝ «*Ծրագրի նպատակն է...*», ինչին հաջորդում է կոնկրետ նպատակների թվարկումը՝ առանձին կետերով: Նպատակների ձևակերպումը կարելի է սկսել հետևյալ բայերով՝ *գարգացնել, սպասել, օժանդակել, փրկել, կացնել, ծանոթացնել, ձևավորել, օժտել, պարզապահել, նախապարզապահել, փրամադրել, խթանել, աջակցել և այլն:*



# Բաժին III

Ուսումնառության վերջնարդյունքներ



- Ինչպե՞ս ձևակերպել ուսումնառության վերջնարդյունքներ





## Դասախոսակենտրոն ուսուցում



Շեշտադրվում է դասավանդումը, այսինքն, ինչ է անում դասախոսը դասի ընթացքում: Ուսանողի գիտելիքները նկարագրող բայեր՝ *գիտենալ, հասկանալ, ծանոթ լինել, տիրապետել* և այլն:

## Ուսանողակենտրոն ուսուցում



Շեշտադրվում են վերջնարդյունքները, այսինքն, թե ինչ ենք ակնկալում ուսանողից դասընթացի ավարտին: Ուսանողի գիտելիքները նկարագրող բայեր՝ *որոշել, թվարկել, վերարտադրել, վերլուծել, հաշվարկել, նախագծել* և այլն:

Դասընթացի կրթական վերջնարդյունքները ձևակերպվում են այնպես, որ պարզորոշ ցույց տան, թե ուսանողը հատկապես ինչպե՞ս է դրսևորելու իր իմանալը, հասկանալը և կարողանալը: Դրանք շարադրվում են այնպես, որ հասկանալի լինեն ուսանողներին, իսկ ուսանողների կողմից դրանց ձեռքբերումը հնարավոր լինի արժանահավատորեն գնահատել: Կրթական վերջնարդյունքները պետք է լինեն իրատեսական և չափելի:

Կրթական վերջնարդյունքները պարզապես դասախոսի ցանկությունների թվարկում չեն: Դասընթացի (ուսումնական մոդուլի) կրթական վերջնարդյունքները միտված են ուսումնառության, այլ ոչ թե դասավանդման ընթացքին, ուստի դրանք սահմանում են ոչ թե այն, թե ի՞նչ կարող է մատուցել դասախոսը, այլ այն, թե ի՞նչ պետք է սովորի ուսանողը: Այդ վերջնարդյունքները պլանավորելիս և ձևակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ դրանք պետք է լինեն գնահատելի: Հարկավոր է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, թե դասընթացի (ուսումնական մոդուլի) կրթական վերջնարդյունքներն ինչպե՞ս են ինտեգրված ամբողջական ծրագրի վերջնարդյունքներին:

Այսպիսով, պարզ է դառնում, որ դասընթացի (կամ կրթական ծրագրի) վերջնարդյունքները սկզբունքորեն տարբերվում են նպատակներից: Դասընթացի նպատակը լայն և ընդհանրական ձևակերպում է դասավանդման մտադրությունների մասին և ցույց է տալիս, թե ի՞նչ է պատրաստվում սովորեցնել դասախոսը դասընթացի (կամ ծրագրի) շրջանակներում: Դրանք սովորաբար ձևակերպվում են դասախոսի տեսանկյունից: Իսկ կրթական վերջնարդյունքները հստակ կերպով սահմանում են, թե ի՞նչ է սովորելու ուսանողը դասընթացի (կամ ծրագրի) շրջանակներում և շարադրվում են ուսանողի տեսանկյունից:

Ներկայումս կրթական վերջնարդյունքների ամենատարածված և եվրոպական շրջանակներում պաշտոնապես ընդունված ձևակերպումը հետևյալն է.

Դասընթացի կամ ուսումնական ծրագրի ավարտին սովորողից ակնկալվող գիտելիքի, կարողությունների և հմտությունների սահմանված ձևաչափի նկարագրություն, որը ցույց է տալիս, թե ուսումնառության ավարտին հատկապես ի՞նչ պետք է գիտենա, հասկանա և կարողանա անել սովորողը:

Ծրագրի կրթական վերջնարդյունքների մի մասն առնչվում է ուսումնառության մասնագիտական ոլորտին, իսկ մյուսը հատկանշական է տվյալ կրթական մակարդակի ծրագրերի համար: Ըստ այդմ, տարբերակում են կրթական վերջնարդյունքների երկու կազմ՝ բուն մասնագիտական, որոնք հանգուցային են տվյալ որակավորման համար և սերտորեն առնչվում են կոնկրետ առարկայական/մասնագիտական ոլորտին, և ընդհանրական կամ փոխանցելի, որոնք հատկանշական են տվյալ շրջափուլի/մակարդակի բոլոր կրթական որակավորումների համար (ուստի և փոխանցելի են մասնագիտական ոլորտից ոլորտ):

## Բակալավրի կրթական ծրագրին բնորոշ կոմպետենցիաների կազմ



Բակալավրի կրթական ծրագրի շրջանավարտները պետք է տիրապետեն հետևյալ կոմպետենցիաներին.

- մասնագիտության պատմության և հիմունքների իմացություն,
- գիտելիքը տրամաբանորեն և հետևողականորեն ներկայացնելու կարողություն,
- նոր տեղեկատվությունը համապատասխան համատեքստում ընկալելու և մեկնաբանելու ունակություն,
- քննական վերլուծության և տեսությունների զարգացման մեթոդները հասկանալու և օգտագործելու կարողություն,
- առարկայի մեթոդները և տեխնոլոգիաները ճիշտ օգտագործելու ունակություն,
- տվյալ առարկայական ոլորտում հետազոտության արդյունքները կիրառելու կարողություն,
- տեսությունների փորձարարական և դիտարկիչ միջոցների արդյունքները հասկանալու ունակություն և այլն:

Հարկ է նշել նաև, որ որոշ կարողություններ, ինչպես օրինակ սովորելու, կիրառելու, վերլուծելու, գնահատելու, սինթեզելու և այլն, հատկանշական են բոլոր կամ գրեթե բոլոր մասնագիտական/առարկայական ոլորտների համար և ունեն կարևոր նշանակություն, բանի որ շրջանավարտների համար ապահովում են կարիերայի և աշխատանքի անցնելու ավելի լայն հնարավորություններ:

Որպես օրինակ, ստորև ներկայացվում է ընդհանրական կարողությունների մի կազմ, որը կարող է օգտակար լինել տարբեր մասնագիտություններով բակալավրի և մագիստրոսի ծրագրերի կրթական վերջնարդյունքները սահմանելիս.

- վերլուծել և սինթեզել,
- կազմակերպել և պլանավորել,
- մայրենի լեզվով գրավոր և բանավոր հաղորդակցվել,
- օտար լեզվով հաղորդակցվել,
- համակարգչով աշխատել,
- տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնել և վերլուծել,
- բարդ խնդիրներ լուծել,
- որոշումներ կայացնել,
- քննաբանորեն մտածել,
- (միջդիսցիպլինար) թիմում աշխատել,
- միջազգային միջավայրում աշխատել,
- այլ ոլորտների մասնագետների հետ շփվել,
- գիտելիքները գործնականում կիրառել,
- հետազոտություն պլանավորել և կատարել,
- նոր իրադրություններին հարմարվել,
- մտահղել/նոր գաղափարներ առաջ քաշել,
- ղեկավարել,
- սովորել,
- ինքնուրույն աշխատել,
- նախագծեր մշակել և կառավարել,
- նախաձեռնողականություն և ձեռներեցություն ցուցաբերել և այլն:

## Մագիստրոսի կրթական ծրագրին բնորոշ կոմպետենցիաների կազմ



Առաջին շրջափուլի ավարտը նաև երկրորդ շրջափուլի մուտքի պահանջն է: Ուստի, մագիստրոսի ծրագրի շրջանավարտները պետք է տիրապետեն նաև հետևյալ կոմպետենցիաներին.

- գիտելիք՝ նորագույն տեսությունների և դրանց մեկնաբանությունների վերաբերյալ,
- տվյալ մասնագիտական ոլորտում տեսության և պրակտիկայի զարգացումներին քննորեն հետևելու և իմաստավորելու ունակություն,
- հետազոտության նորագույն մեթոդների և տեխնոլոգիաների իմացություն,
- ինքնուրույն հետազոտություն կատարելու և հետազոտության արդյունքները մեկնաբանելու կարողություն,
- տվյալ մասնագիտական ոլորտում որոշակի ներդրում կատարելու ունակություն (օրինակ՝ մագիստրոսական թեզի կատարման արդյունքում),
- ինքնուրույնության և ստեղծագործական մոտեցման դրսևորում և այլն:

# Դասընթացների կրթական վերջնարդյունքների ձևակերպումը



Գոյություն ունեն դասընթացի կամ այլ ուսումնական մոդուլի մշակման և իրականացման (մատուցման) երկու տարբեր մոտեցումներ, որոնք նկարագրված են ստորև:

1. Առաջինը ավանդական կամ դասախոսակենտրոն մոտեցումն է, որը բնութագրվում է հետևյալ գործոններով.
  - սկսվում է դասընթացի բովանդակության նկարագրությամբ,
  - նկարագրվում է, թե ինչ է ուսուցանելու (ինչ է մատուցելու) դասախոսը դասի ընթացքում,
  - ինչպես են ուսանողները յուրացնելու մատուցված նյութը (բովանդակությունը),
  - դասընթացի նկարագրությունը սահմանափակվում է միայն բովանդակության շարադրումով,
  - հստակ չէ, թե ինչ պետք է գիտենա և կարողանա անել ուսանողը դասընթացի ավարտին:
2. Երկրորդը կոչվում է ուսանողակենտրոն կամ արդյունահեն մոտեցում, որը բնութագրվում է հետևյալ գործոններով.
  - սահմանում է դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքները, որոնք կարելի է չափել,



- Դասընթացի (կամ կրթական ծրագրի) կրթական վերջնարդյունքների քանակը պետք է պահել կառավարելի սահմաններում: Հարկավոր է հաշվի առնել, որ եթե դասընթացի (կամ կրթական ծրագրի) վերջնարդյունքները ձևակերպված են շատ ընդհանրական, ապա դժվարանում է դրանց գնահատումը, իսկ եթե նկարագրված են շատ մանրամասն, ապա մեծանում է դրանց քանակը:
- Կրթական վերջնարդյունքների ցանկը կազմելիս լինել իրատես. հաշվի առնել ուսանողների գիտելիքների ներկա մակարդակը, ուսման համար տրամադրվող աշխատաժամանակը (դասընթացին հատկացված կրեդիտները) և ուսումնառության առկա ռեսուրսները:
- Համոզվել, որ ձևակերպված կրթական վերջնարդյունքները համահունչ են դասընթացի սահմանված նպատակներին և շաղկապված են կրթական ծրագրի վերջնարդյունքների հետ:
- Դասընթացի (կրթական մոդուլի) համար սահմանվում են 4-8 կրթական վերջնարդյունք (ներառյալ 1-2 ընդհանրական վերջնարդյունք): Ընդ որում, 2 կրեդիտ ծավալով դասընթացի համար՝ մինչև 4 կրթական վերջնարդյունք, իսկ 6 կրեդիտ ծավալով դասընթացի համար՝ մինչև 8 կրթական վերջնարդյունք և այլն:
- Բոլոր կրթական վերջնարդյունքները ձևակերպելուց և վերջնական ցանկը կազմելուց հետո այն տրամադրել գործընկեր դասախոսներին և ուսանողներին ու համոզվել, որ դրանք հասկանալի և ընկալելի են նրանց համար:

Դուբլինյան նկարագրիչներում տարբերակվում են կոմպետենցիաների ձևոք բերման 5 փուլ.

1. Գիտելիք և ըմբռնում
2. Կիրառելով գիտելիք և ըմբռնում
3. Դատողություններ անել
4. Հաղորդակցություն
5. Ուսման հմտություններ:

Մակարդակներից յուրաքանչյուրի համար (բակալավր, մագիստրոս, դոկտոր) այս փուլերից յուրաքանչյուրում սահմանվում է չափանիշ: Դուբլինի նկարագրիչները նաև օգտակար են այն առումով, որ համեմատում են ակնկալիքները հինգ ոլորտներում՝ գիտելիք և պատկերացում, դրանց կիրառումը, դատողություններ անելը, հաղորդակցվելը և ուսման հմտությունները: Յուրաքանչյուր 3 փուլի համարակնկալիքները (կարճ փուլի

## Իմացության ձևերի Բլումի տաքսոնոմիան


Բենիամին Բլում (1913-1999)



գնահատում՝ բարձրագույնում (տե՛ս աղյուսակ 1): Այսօր Բլումի տաքսոնոմիան նաև կրթական վերջնարդյունքների դասակարգման և ստորադասման ամենարճնոմաված ձևերից մեկն է, որտեղ յուրաքանչյուր մակարդակի կրթական վերջնարդյունքի նկարագրման համար առաջարկվում է բայերի որոշակի ցանկ: Այն մի օգտակար գործիք է, որը կրթական վերջնարդյունքների ձևակերպման համար տրամադրում է պատրաստի կառուցվածքներ և համապատասխան բայերի ցանկ: Բլումը բացահայտեց, որ *խմանալը* կամ *գիտելնալը* ներառում են 6 հաջորդական մակարդակ (նկար 3)՝ դասավորված որոշակի հիերարխիայով: Նա դիտարկում էր *խմանալը* որպես մի գործընթաց, որտեղ նախորդ արդյունքները հիմք ենք հանդիսանում իմացության ավելի բարդ մակարդակներ գարգացնելու համար:

Ուսումնառության գործընթացում իմացության դրսևորումներն ըստ բարդության մակարդակների առաջին անգամ դասակարգել է ամերիկացի գիտնական Բենիամին Բլումը՝ 1956թ-ին: Իմացության ձևերի այդ հիերարխիկ դասակարգումն այնուհետև կոչվել է Բլումի տաքսոնոմիա (*տաքսոնոմիա* նշանակում է դասակարգում), որն ունի 6 մակարդակ ըստ աճող բարդության՝ սկսած փաստերի պարզ հիշողությունից և վերարտադրությունից ստորին մակարդակում, մինչև վերլուծություն և

ՔՆՈՄԻ ՄԱՍՆԱՆՈՒՄ



Փաստել, զնահատել, ընտրել,  
 հիմնավորել, աջակցել, եզրահանգել  
 Կարգավորել, կազմել, մտահղացնել,  
 ձևավորել, պատրաստել  
 Վերլուծել, դասակարգել, համեմատել,  
 կիստել

Լուծել, կիրառել, ներկայացնել,  
 օգտագործել

Բացատրել, մեկնաբանել,  
 բառափոխել

Սահմանել, նկարագրել, սահմանել,  
 հիշել, վերարտադրել



Ժամանակակից 2-րդ առ հետազոտողներ համոզմունքն են հայտնում, որ քննադատական մտածողության զարգացման հիմնական մոդելները հաշվի են առնում Բենջամին Բլումի կրթական նպատակների տաքսոնոմիան, որն առաջին անգամ ներկայացվել է 1956 թվականին «Կրթական նպատակների տաքսոնոմիա» կրթական նպատակների դասակարգման ձեռնարկում: Բ. Բլումի և Դ. Կրատվոլի տաքսոնոմիայի համաձայն՝ կրթական նպատակները բաժանվում են երեք դաշտի կամ ոլորտի՝ ճանաչողական, հուզական կամ հուզազգայական և հոգեշարժողական:

<b>Գնահատում</b> <i>Հիտելիքի մասին դատողություններ անել</i>	Մեկնաբանել, հիմնավորել, որոշել, քննադատել, դատողություն անել, լուծել, ռեյտինգավորել, արժևորել, գնահատական տալ
<b>Համադրում</b> <i>Ստեղծել նոր գաղափարներ կամ առարկաներ</i>	Առաջադրել թեզ, կանխատեսել, ստեղծել, արտադրել, մոդիֆիկացնել, ընդլայնել, նախագծել, ձևակերպել, մշակել, կառուցել, համադրել
<b>Վերլուծություն</b>	Ուսումնասիրել, միավորել, տարանջատել,

<i>Տեղեկատվությունը մասերի բաժանել</i>	դասակարգել, հայտնաբերել, գննել, ուսումնասիրել, տարբերակել, մասերի բաժանել, ընդհանրացնել, համեմատել, վերլուծել
<b>Կիրառություն</b> <i>Տեղեկատվությունը գործածել, գործադրել, կիրառել</i>	Փորձել, դիագրամ կառուցել, կատարել, գրաֆիկներ կառուցել, գործողությունների վերածել, կառուցել, զեկուցել, կիրառել, կիրառական համեմատություն անել, կիրառությունից հետևություն անել, տարբերը իրար հետ համադրել, հարմարեցնել
<b>Ընկալում</b> <i>Տեղեկատվությունը հասկանալ</i>	Հանրագումարել, համեմատել, փորձարկել, տարրական զուգահեռներ տանել, ցուցադրել, բացատրել, վերաձևակերպել, քննարկել
<b>Գիտելիք</b> <i>Տեղեկատվությունը գտնել կամ հիշել</i>	Պատմել, ցուցադրել, թվարկել, տեղադրել, կրկնել, սահմանել, բացատրել, քննել, մտաբերել, անվանել, ցույց տալ

	Մակար- դակ	Իմացության ձևերը	Համապատասխան բայերը (ցանկն ամբողջական չէ)
Գիտելիք և իմացություն	1	<b>Գիտելիք</b> – որոշակի փաստերի և տվյալների հիշողություն և վերարտադրություն	<i>Արտահայտել, պատմել, նկարագրել, ընտրել, ներկայացնել, վերարտադրել, ուրվագծել, թվարկել, ամփանել, հիշել, վերհիշել, մտապահել, ցույց տալ, գրանցել և այլն</i>
	2	<b>Իմացություն</b> – փաստերը և տվյալները հասկանալու և մեկնաբանելու ունակություն	<i>Պարզաբանել, մեկնաբանել, որոշել, սահմանել, ձևակերպել, բացատրել, հակադրել, քննարկել, ճանաչել, հիմնավորել, ընտրել, մատնանշել, լուսաբանել, դասակարգել և այլն</i>
Վերլուծություն	3	<b>Կիրառություն</b> – առաջադրանքի կամ խնդրի կատարման համատեքստում գիտելիքի և իմացության կիրարկում	<i>Կիրառել, օգտագործել, կիրարկել, կատարել, գործածել, լուծել, մշակել, ընտրել, գտնել, կառուցել, հաշվարկել, գործնականում իրականացնել և այլն</i>
	4	<b>Վերլուծություն</b> – տեղեկատվության կամ փաստերի համեմատում, բաղկացուցիչ մասերի կամ իմաստների բաժանում՝ դրանց իմաստը, նշանակությունը և փոխհարաբերությունը հասկանալու նպատակով	<i>Համեմատել, համադրել, հակադրել, բաժանել, տրոհել, տարանջատել, տարբերակել, մասնատել, մասերի բաժանել, տարբալուծել, ուսումնասիրել, քննել, զննել, քննարկել, վերլուծել, մեկնաբանել, հարաբերել, կապ հաստատել և այլն</i>

	Մակար- դակ	Իմացության ձևերը	Համապատասխան բայերը (ցանկն ամբողջական չէ)
	5	Մինթեզ – տեղեկատ- վության կամ փաստերի նորովի համակցում՝ ցանկալի հատկանիշնե- րով նոր ամբողջություն ստանալու նպատակով	Նախագծել, մշակել, սրել, կազ- մել, սրանալ, դուրս բերել, սինթե- զել, կառուցել, միավորել, պատրաս- տել, բացահայտել, որոշել, հայտ- նագործել, վերափոխել, համակցել, միավորել, միացնել, ի մի բերել, ամ- փոփել, համակարգել, վերաձևա- կերպել, ընդհանրացնել և այլն
	6	Գնահատում – առկա տեղեկատվության կամ փաստերի հիման վրա դատողություններ և եզ- րահանգումներ անելը և արդյունքների արժևո- րումը	Արժևորել, գնահատել, հարաբերել, համեմատել, համադրել, հակադ- րել, դասակարգել, փորձարկել, դասել, չափել, հաշվել, ընտրել, քննադատել, որոշել, եզրահանգել, հետևություններ անել, ենթադրել, եզրակացնել և այլն:




- Մովորաբար նկարագրվում է գործողության/ակտիվ բայերի գործածությամբ, ինչպես օրինակ.
  - ✓ արտահայտել
  - ✓ պատմել
  - ✓ նկարագրել
  - ✓ ընտրել
  - ✓ ներկայացնել
  - ✓ վերարտադրել
  - ✓ ուրվագծել
  - ✓ թվարկել
  - ✓ անվանել
  - ✓ հիշել
  - ✓ վերհիշել
  - ✓ մտապահել
  - ✓ ցույց տալ
  - ✓ գրանցել և այլն:

## Գիտելիքի դրսևորման օրինակներ.



- Թվարկել ռեֆլեքսների տեսակները ....
- Վերարտադրել դասական մեխանիկայի օրենքները ...
- Նկարագրել թորբխտի ախտանիշները .....
- Պատմել հնագույն կելտերի ծագումնաբանությունը ....
- Ներկայացնել ինժեներական նախագծման փուլերը .....
- Կրկնել Բուլյան հանրահաշվի օրենքները և արսիմանները ...







**2. Իմացություն** – առկա գիտելիքը, փաստերը, տվյալները կամ ուսումնասիրած տեղեկատվության իմաստը հասկանալը և մեկնաբանելը: Բնութագրվում է ըստ խորության, ընդգրկույթի և բարդության: Գիտելիքի դրսևորման ձևերից են պարզաբանելը, բացատրելը, մեկնաբանելը և այլն:




- Սովորաբար նկարագրվում է գործողության/ակտիվ բայերի գործածությամբ, ինչպես օրինակ.
- ✓ պարզաբանել
  - ✓ մեկնաբանել
  - ✓ որոշել
  - ✓ սահմանել
  - ✓ ձևակերպել
  - ✓ բացատրել
  - ✓ հակադրել
  - ✓ քննարկել
  - ✓ ճանաչել
  - ✓ հիմնավորել
  - ✓ ընտրել
  - ✓ մատնանշել
  - ✓ լուսաբանել
  - ✓ դասակարգել և այլն:



**3. Կիրառություն** – առաջադրանքի կամ խնդրի կատարման համատեքստում գիտելիքի և իմացության կիրարկում: Կարող է դիտարկվել որպես գիտելիքը և իմացությունը որոշակի պայմաններում կամ նոր իրադրություններում կիրարկելու (գործածելու) և խնդիրներ լուծելու ունակություն: Բնութագրվում է ըստ հմտության և բարդության: Կիրառության դրսևորման ձևերից են օգտագործելը, կատարելը, գործածելը և այլն:



- Սովորաբար նկարագրվում է գործողության/ակտիվ բայերի գործածությամբ, ինչպես օրինակ.
  - ✓ կիրառել
  - ✓ օգտագործել
  - ✓ կիրարկել
  - ✓ կատարել
  - ✓ գործածել
  - ✓ լուծել
  - ✓ մշակել
  - ✓ ընտրել
  - ✓ գտնել
  - ✓ կառուցել
  - ✓ հաշվարկել
  - ✓ գործնականում իրականացնել և այլն:




**4. Վերլուծություն** – տեղեկատվության, փաստերի կամ նյութի համեմատում, բաղկացուցիչ մասերի կամ իմաստային բաղադրիչների տրոհում՝ դրանց նշանակությունը, իմաստը, և/կամ կառուցվածքային կապերն ու փոխհարաբերությունը վեր հանելու և հասկանալու նպատակով: Բնութագրվում է ըստ խորության և ընդգրկույթի: Վերլուծության դրսևորման ձևերից են համեմատելը, ուսումնասիրելը, զննելը և այլն:




- Սովորաբար նկարագրվում է գործողության/ակտիվ բայերի գործածությամբ, ինչպես օրինակ.
- ✓ համեմատել
  - ✓ համադրել
  - ✓ հակադրել
  - ✓ բաժանել
  - ✓ տրոհել
  - ✓ տարանջատել
  - ✓ տարբերակել
  - ✓ մասնատել
  - ✓ մասերի բաժանել
  - ✓ տարրալուծել
  - ✓ ուսումնասիրել
  - ✓ քննել
  - ✓ զննել
  - ✓ քննարկել
  - ✓ վերլուծել
  - ✓ մեկնաբանել
  - ✓ հարաբերել
  - ✓ կապ հաստատել և այլն:

## Վերլուծության օրինակներ.



- Վերլուծել և համադրել էլեկտրոնային բիզնեսի տարրեր մոդելները ...
- Քննարկել էներգիայի փոխակերպման պրոցեսների տնտեսական և բնապահպանական ազդեցությունները ...
- Բացահայտել և հաշվարկել սխալանքի աղբյուրները չափումների գործընթացում ...
- Դասակարգել տարրեր ժանրերի և տարրեր ժամանակաշրջանների տեքստերի լայն շարքեր ...
- Վերլուծել և մեկնաբանել գերմանախոս երկրների քաղաքական կառուցվածքն ու տնտեսության բնորոշ գծերը ...
- Հետազոտել կառավարման հանգուցային խնդիրները կոնկրետ արտադրության կամ ընկերության դեպքում ...



### 5. Մինթեզ (համադրություն)

– տեղեկատվության, փաստերի, նյութերի առանձին տարրերի նորովի համակցում (միավորում)՝ ցանկալի հատկանիշներով նոր ամբողջություն ստանալու կամ նորը ստեղծելու նպատակով: Բնութագրվում է ըստ բարդության և տեսակի: Մինթեզի դրսևորման ձևերից են ստանալը, մշակելը, ստեղծելը և այլն:




➢ Սովորաբար նկարագրվում է գործողության/ակտիվ բայերի գործածությամբ, ինչպես օրինակ.

- ✓ նախագծել
- ✓ մշակել
- ✓ ստեղծել
- ✓ կազմել
- ✓ ստանալ
- ✓ դուրս բերել
- ✓ սինթեզել
- ✓ կառուցել
- ✓ միավորել
- ✓ պատրաստել
- ✓ բացահայտել
- ✓ որոշել
- ✓ հայտնագործել
- ✓ վերափոխել
- ✓ համակցել
- ✓ միավորել
- ✓ միացնել
- ✓ ի մի բերել
- ✓ ամփոփել
- ✓ համակարգել
- ✓ վերաձևակերպել
- ✓ ընդհանրացնել և այլն:

### Մինթեզի օրինակներ.



- Առաջարկել լուծումներ բարդ էներգետիկ համակարգերի կառավարման համար ...
- Մշակել ուսումնառության և դասավանդման նոր մոտեցումներ, որոնք արդյունավետ են տվյալ միջավայրում ....
- Ստանալ միջավայրի աղտոտիչների կենսաքայքայման և կենսաբանական վերականգնման նոր եղանակներ և կատարելագործել գոյություն ունեցողները ...
- Կառուցել արդյունավետ ալգորիթմներ կամ տվյալների բազաներ ....
- Ստեղծել ինտերակտիվ կայքէջեր և ցանցային կիրառություններ ....
- Մինթեզել նախապես տրված հատկություններով օրգանական միացություններ ...



## 6. Գնահատում (արժևորում)

- առկա տեղեկատվության կամ փաստերի հիման վրա դատողություններ և եզրահանգումներ անելը և արդյունքները արժևորելը: Բնութագրվում է ըստ ընդգրկույթի և տեսակի: Գնահատման դրսևորման ձևերից են արժևորելը, համեմատելը, չափելը և այլն:



➤ Սովորաբար նկարագրվում է գործողության/ակտիվ բայերի գործածությամբ, ինչպես օրինակ.

- ✓ արժևորել
- ✓ գնահատել
- ✓ հարաբերել
- ✓ համեմատել
- ✓ համադրել
- ✓ հակադրել
- ✓ դասակարգել
- ✓ տարբերակել
- ✓ դատել
- ✓ չափել
- ✓ հաշվել
- ✓ ընտրել
- ✓ քննադատել
- ✓ որոշել
- ✓ եզրահանգել
- ✓ հետևություններ անել
- ✓ ենթադրել
- ✓ եզրակացնել
- ✓ եզրահանգել և այլն:

## Գնահատման օրինակներ.



- Համադրել դեղերի արդյունավետությունը, գնահատել դրանց կողմնակի ազդեցությունները և բացասական դրսևորումները ...
- Համեմատել մարքեթինգային ռազմավարությունները էլեկտրոնային բիզնեսի տարբեր մոդելների համար ...
- Արժևորել սպորտի և ֆիզդաստիարակության դերակատարությունը՝ երիտասարդ սերնդի առողջության ամրապնդման գործում ...
- Չափել գլոբալ տաքացման ազդեցությունը բնության հավասարակշռության վրա ...
- Գնահատել ԵՄ մշակութային ինտեգրմանը միտված ռազմավարությունները և նախագծերը ...
- Ի մի բերել Մ. Ֆարադեի հիմնական ներդրումը էլեկտրամագնիսական ինդուկցիայի բնագավառում ...

## 1.5. Ծրագրի կրթական վերջնարդյունքների ձևակերպումը



Ծրագրի կրթական վերջնարդյունքների որոշումը սերտորեն շաղկապված է նրա նպատակների հետ: Ուստի, հաջորդ խնդիրը, որն առաջանում է ծրագրի հիմնական նպատակները հայտագրելուց հետո՝ վերջինիս կրթական վերջնարդյունքների ձևակերպումն է: Առաջնային հարցն այս

ուղղությամբ հետևյալն է. ինչպե՞ս ձևակերպել վերջնարդյունքներն ըստ կրթական մակարդակների (շրջափուլերի)՝ բակալավրի և մագիստրոսի ծրագրերի համար: Առաջարկվում է կրթական վերջնարդյունքների սահմանման հաջորդականության վայրընթաց մոտեցում՝ սկզբում մագիստրոսի, այնուհետև՝ բակալավրի ծրագրերի, իսկ վերջում՝ առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների համար: Ծրագրի կրթական վերջնարդյունքները սահմանե-

Յետևելով Բ. Բլումին, կարող ենք ասել, որ առանց յուրացնելու տվյալ տեղեկատվությունը, տեքստում առկա առանցքային հասկացությունները, գաղափարները, հնարավոր չէ այն վերլուծել, միակցել, գնահատել:


Բակալավրի աստիճան է շնորհվում անձանց, ովքեր ունեն համակողմանի և համակարգված գիտելիքներ և կարողություններ՝ մի շարք ոլորտներում մասնագիտական աշխատանք կատարելու և/կամ ուսումը շարունակելու համար
Ունակ է համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու գործունեություն և կատարելու առաջադրանքներ ուսումնառության ընթացքում և/կամ աշխատանքում, ցուցաբերելու որոշակի ինքնուրույնություն որոշումներ կայացնելիս, ինչպես նաև՝ պատասխանատվություն ստանձնելիս: Ունակ է որոշակի ուղղորդման պայմաններում բացահայտելու իր սեփական կրթական պահանջմունքները ինքնուրույն որոշում կայացնելու՝ իր հետագա ուսումնառությունը տարբեր միջավայրերում շարունակելու համար:
Կարող է կիրառել քննադատական մտածողություն,



- Սինթետի մակարդակում ուսանողների մեջ ձևավորվում են գնահատողական ընթերցանության կարողություններ: Ըստ Բ. Բլոմի՝ ուսանողները պետք է կարողանան համեմատել, հակադրել՝ մանրամասնորեն ուսումնասիրելով տեքստում առկա փաստերը և երևույթները: Նրանք պետք է կարողանան բացահայտել կամ նկատել, հաշվի առնել տեքստում առկա վերապահումները, տրամաբանական հակասությունները և շտկել իրենց եզրահանգումները:



# Ժամանակակից պատմագիտության բակալավրի ԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունք.



# Ժամանակակից պատմագիտության մագիստրոսի ԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունք.

## Գլուխ


- մաթեմատիկայի և պատմության տեսությունները և մեթոդները - պատմության ընդարձակ ժամանակաշրջանների միջև վիճակագրական վիճակագրությունը:

## Կոբուլ է

- պատմագրական խնդիրների հետազոտություն - գնահատել հետազոտության բացահայտումների արդյունքները - որոշել դրանց հետևանքները այլ համայնքային գիտությունների համար

## Թագուրդ

-կատարված եզրակացությունները - օժանդակել հայտնագործությունների կատարմանը SCS միջոցների կիրառմամբ



## Կոբուլ է

-գնահատել ներկայումս կա թաղերը - նախագծել հետագա զարգացումների համար ստեղծագործական ուղիներ

## Կոբուլ է.

-կատարել հետագա զարգացումների բարդությունը - դրան որոշակի առաջնություններ հանձնել սեփական տեսանկյունից մեթոդ

Այսպիսով, կրթական վերջնարդյունքները ձևակերպվում են այնպես, որ ուսանողի կողմից գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը հնարավոր լինի դրսևորել, դիտարկել, չափել և գնահատել:

Հարկավոր է խուսափել իմանալ, գիտենալ, սովորել, տեղյակ պահել, հասկանալ, ընկալել, ըմբռնել, տիրապետել և այլ բայերից, քանի որ դրանց դրսևորման և գնահատման եղանակները անորոշ են: Փոխարենը հարկավոր է նկարագրել թե ուսանողները հատկապես ինչպես պետք է դրսևորեն ձեռք բերած գիտելիքը, կարողությունը և հմտությունը:

- Յուրաքանչյուր կրթական վերջնարդյունք նկարագրել մեկ նախադասությամբ՝ միայն մեկ բայով: Լինել հնարավորինս հակիրճ:
- Հարկավոր է խուսափել *խմանալ, գիտենալ, սովորել, փեղյակ կամ ծանոթ լինել, հասկանալ, ընկալել, ըմբռնել, փիրապել* և նման այլ բայերի գործածումից, քանի որ դրանց դրսևորման և գնահատման եղանակներն անորոշ են և կարիք ունեն լրացուցիչ մեկնաբանության:
- Գրել ուսանողի համար հասկանալի և մատչելի լեզվով, քանի որ նա է կրթական վերջնարդյունքների առաջին հասցեատերը:
- Կրթական վերջնարդյունքները ձևակերպելիս հարկավոր է առավելապես կենտրոնանալ այն հանգամանքի վրա, թե ինչ ենք ակնկալում, որ ուսանողները դրսևորեն կամ ցուցաբերեն դասընթացի (կամ կրթական ծրագրի) ավարտին:
- Կրթական վերջնարդյունքները պետք է սահմանել/ձևակերպել նվազագույն շեմային մակարդակում (տե՛ս մակարդակ/չափ բնութագրիչը նախորդ բաժնում)՝ հնարավորություն ընձեռելով բոլոր ուսանողներին ձեռք բերելու դրանք:
- Հստակություն և միարժեքություն ապահովելու նպատակով խուսափել բարդ նախադասություններից, բացառիկ դեպքերում օգտագործել մեկից ավելի նախադասություն մեկ կրթական վերջնարդյունքի ձևակերպման համար:
- Կրթական վերջնարդյունքների ցանկում ներառել Բլումի տաքսոնոմիայի ոչ միայն ստորին՝ 1-3-րդ, այլ նաև վերին՝ 4-6-րդ մակարդակներին համապատասխանող իմացության ձևերը:
- Ձևակերպումից հետո պետք է համոզվել, որ կրթական վերջնարդյունքը դիտարկելի, չափելի և գնահատելի է, այսինքն՝ հնարավոր է հեշտությամբ պարզել ուսանողն այդ վերջնարդյունքը ձեռք բերեց, թե՛ ոչ:

## Կրթական վերջնարդյունք. սահմանում

Վերջնարդյունքների սահմանման ժամանակ հաճախակի հանդիպող սխալներ.

1. Տվյալ կրթական մակարդակի համար չափից ընդգրկուն կամ, հակառակը, չափից նեղ արդյունք է սահմանված
2. Վերացական բառեր ու բառակապակցություններ են օգտագործված
3. Վերջնարդյունքները չափից շատ են
4. Մեկ վերջնարդյունքի մեջ մի քանի բայ է օգտագործված
5. Սխալ կոգնիտիվ մակարդակ է ընտրված
6. Վերջնարդյունքը իրատեսական չէ
8. Վերջնարդյունքը գնահատելի, չափելի չէ

# Ծրագրի վերջնարդյունքները լինում են երկու տեսակ

- Կրթական վերջնարդյունքներ, որոնց ձեռքբերումը ուսանողի կողմից կարելի է չափել կամ գնահատել ծրագրի իրականացման ընթացքում կամ նրա ավարտին (եզրափակիչ քննություններ, ավարտական ատեստավորում և այլն):
- Կրթական վերջնարդյունքներ, որոնց ձեռքբերումը ուսանողի կողմից հնարավոր չէ չափել ծրագրի իրականացման ընթացքում կամ նրա ավարտին: Դրանք դրսևորվում են ծրագրի շրջանավարտի մասնագիտական գործունեության ընթացքում և չափվում կամ գնահատվում են գործատուի կողմից:

Կրթական վերջնարդյունքները տարբերվում են նաև կոմպետենցիաներից: Կոմպետենցիան սովորողի գիտելիքի, կարողությունների և հմտությունների կամայական դրսևորումն է, իսկ կրթական վերջնարդյունքն ակնկալվող կոմպետենցիայի սահմանված ձևաչափի նկարագրությունն է, որը հնարավորություն է տալիս չափել դրանց ձեռքբերման/դրսևորման մակարդակը: Կոմպետենցիաները գրվում են շատ ընդհանրական ձևով.

Օրինակ.

- *օգտար լեզվով հաղորդակցվելու հմտություն,*
- *որոշումներ կայացնելու ունակություն,*
- *նախագծեր մշակելու և կառավարելու կարողություն,*
- *փարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն*

*և այլն:*

Կրթական վերջնարդյունքների օգտագործումը ի տարբերություն բովանդակային մոտեցման՝ ունի մի շարք առավելություններ.

- հստակ պատկերացում է տալիս ուսանողների ակնկալվող կրթական ձեռքբերումների և դրանց դրսևորման ձևերի մասին,
- հնարավորություն է տալիս չափելու ուսումնառության արդյունքների ձեռքբերման որակը և մակարդակը,

## Learning outcomes should be student focused

Course or Teacher-Centered Outcome in Syllabus	Learner-Centered Equivalent in Syllabus
1. introduce students to the major turning points and processes in North American history from early colonization to the end of the Civil War era	1. <b>list and describe</b> the major turning points and processes in North American history from early colonization to the end of the Civil War era
2. create an analysis of the formal constructs of physical design	2. <del>understand</del> the formal constructs of physical design Explain to an INE Use formal constructs to...
3. enable students to practice their skills of written analysis and communication	3. <b>develop and practice</b> their skills of written analysis and communication
4. to enhance students' understanding of how gender, race, ethnicity, and socioeconomic class have shaped Americans' lives	4. <del>understand</del> how gender, race, ethnicity, and socioeconomic class have shaped Americans' lives ??




# Բաժին IV

Թյունիսգի մեթոդաբանություն




# Թյունինգի մեթոդաբանություն

Ինչ է Թյունինգի մեթոդաբանությունը՝ այն ստեղծվել է որպեսզի կրթական ծրագիրը դարձնա հասկանալի և համադրելի: Այս մեթոդաբանության կարգախոսն է “Կառուցել կրթական կառուցվածքները և ծրագրերը տարբերության և ինքնավարության սկզբունքի վրա”:




Համաձայն TUNING մեթոդաբանության, կրթական ծրագրերը մշակելիս անհրաժեշտ է կատարել հետևյալ հարցադրումները:

1. Արդյո՞ք կա հասարակության կողմից պահանջ տվյալ ծրագրի նկատմամբ ազգային/տարածաշրջանային/եվրոպական մակարդակներում:
2. Արդյո՞ք կարիքների վերհանումն իրականացվել է շահակիցների, մասնավորապես՝ գործատուների, մասնագետների և մասնագիտական կազմակերպությունների, ներգրավմամբ:
3. Արդյո՞ք ծրագիրը հետաքրքրական է ակադեմիական տեսանկյունից:
4. Արդյո՞ք համալսարանում կան անհրաժեշտ ռեսուրսներ ծրագիրը իրագործելու համար, թե՛ անհրաժեշտ է փնտրել հաստատությունից դուրս:



Եվրոպայում կրթական կառուցվածքների համադրում (Tuning Education Structures in Europe) ծրագիրը սկսվել է 2000 թ.-ին Բոլոնիայի գործընթացի և այնուհետև Լիսաբոնի ռազմավարության քաղաքական ուղղությունները բարձրագույն կրթության համակարգում արտացոլելու համար: Որոշ ժամանակ անց, այն դարձավ առաջին, երկրորդ և երրորդ մակարդակների կրթական ծրագրերը վերանայելու, մշակելու, ներդնելու, գնահատելու և որակը բարելավելու գործընթաց:



Tuning ծրագրի շրջանակում մշակվել էր մեթոդաբանություն, որը թույլ կտար հասկանալու կրթական ծրագրերը և դրանց համադրելիության ապահովման ուղիները: Տարբեր մասնագիտական տիրույթներում կրթական ծրագրերի մշակման մեթոդաբանության համար ընտրվել էին մոտեցումների 5 տիրույթ.

1. ընդհանրական (ընդհանրական ակադեմիական) կոմպետենցիաներ,
2. մասնագիտական տիրույթին հաստուկ կոմպետենցիաներ,
3. ԿՓԵՀ կրեդիտների դերը կուտակման համակարգում
4. դասավանդման և ուսումնառության, գնահատման մեթոդները/մոտեցումները
5. կրթական գործընթացում որակի բարելավման կարևորությունը:

Թյունինգի մեթոդաբանությունը պահանջում է լայնածավալ քննարկումներ շահակիցների՝ շրջանավարտների, գործատուների և գիտնականների հետ, տվյալ կրթական ծրագրի հիմնական կոմպետենցիաների բացահայտելու համար: Մակայն ընդհանուր կոմպետենցիաներին միշտ գերակշռող ծրագրերում առանձնացվում է վերլուծելու և համադրելու կարողությունը, ինչպես նաև խնդիրներ լուծելու և ինքնուրույն սովորել կարողանալու հմտությունները: Սովորաբար որպես ընդհանուր հմտություններ որպես կանոն մատնանշվում են նաև հետևյալ հմտությունները. միջավայրում արագ ադապտացվելու, պրակտիկայում տեսությունը կիրառելու, տեղեկությունը կիրառելու հմտությունը, ինչպես խմբում, այնպես էլ ինքնուրույն աշխատելու հմտությունը, պլանավորելու և կազմակերպելու հատկությունները և այլն:

Թյունինգի մեթոդաբանության մեջ կրթական ծրագիրը հասկանալի և համադրելի դարձնելու համար առանձնացվել է հիմգ մոտեցումներ: Դրանք են՝

1. Ընդհանուր կոմպետենցիաները (վերջնարդյունքները)
2. Առարկայական վերջնարդյունքները
3. ECTS – ի դերը որպես կուտակող համակարգ
4. Դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացներում որդեգրված մոտեցումները
5. Կրթական գործընթացում որակի ապահովման և բարձրացման համակարգը (ընդգծելով բուհում առկա ինստիտուցիոնալ որակի մշակույթը):

Թյունինգի մեթոդաբանության շրջանակում առաջարկվում է մշակել, նախագծել, իրականացնել ուսումնական ծրագրեր, ինչպես կոնկրետ հաստատության/բուհի համար, այնպես էլ համատեղ, երկու կամ ավելի հաստատությունների/բուհերի համար: Ուսումնական ծրագրի (տեղական ծրագիր կամ (միջազգային) ինտեգրված ծրագիր/ համատեղ աստիճանի շնորհման համար) նախագծման համար առաջարկվում է հետևյալ հիմնական քայլերը.

Programme learning outcomes	Basitoxology	Applied Pharmacology	Toxicology Testing Methods	Analytical Toxicology	Biochemical Toxicology	Molecular and Reproductive Toxicology	Law and regulation in Toxicology	Environmental Toxicology	Target Organ Toxicology	Practical Toxicology	Materials and Medical Device Toxicology	Project	Innovation and Entrepreneurship
PLO 1	X	X	X	X	X	X		X	X	X	X	X	
PLO 2	X		X	X	X	X		X	X	X	X	X	
PLO 3			X									X	
PLO 4			X									X	
PLO 5			X				X	X	X	X		X	
PLO 6	X	X						X	X			X	X
PLO 7							X				X	X	
PLO 8	X		X	X	X	X	X	X	X	X	X	X	X
PLO 9												X	X

- Ուսումնառության վերջնարդյունքները պետք է լինեն SMART.
  - Հստակ
  - Չափելի
  - Հասանելի
  - Համարժեք
  - Ժամակարգված
- Արտացոլեն ծրագրի բովանդակությունը, մակարդակը և համատեքստը
- Պետք է ձեռքբերելի լինեն ուսումնական ծանրաբեռնվածության որոշակի ծավալի սահմաններում,
- Պետք է կապված լինեն ուսումնառության համապատասխան ձևերի, գնահատման մեթոդների և չափանիշների հետ,
- Լինեն 10-12-ի սահմանում



Կրթական  
վերջնարդյունքների  
սահմանումը  
գործընթաց է, ոչ  
**միանգամյա**  
գործողություն

## Բենչմարքինգի իրականացման համար պետք է ապահովել հետևյալ սկզբունքները

- Փոխհամաձայնություն: Բենչմարքինգ իրականացնելու համար այլ բուհից պետք է ձեռք բերել համաձայնության, որը կդարձնի գործընթացը օրինական և տրամադրվող տեղեկատվության սահմանները կլինեն խորը և չափելի, և չի խախտվի գրագողության/հեղինակային ոչ մի կանոն (անհրաժեշտ է միշտ կատարել ցիտումներ, որ տեղեկությունը որտեղից է ձեռք բերված):
- Նույնականություն: Համեմատվող ՄԿԾ-ների ոլորտները, որակավորումը և պրոֆիլը պետք է նույնը լինի:



## ***ՄԿԾ-ի միջազգայնացումը և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցումը***

Բենչմարքինգը տվյալների հավաքման և ներկայացման ստանդարտացված մեթոդ է, որը հնարավորություն է կտա համադրել տարբեր բուհերի նմանատիպ կրթական ծրագրերի արդյունավետությունը, որոշել լավագույն փորձը, ժամանակին ախտորոշել խնդիրները, հայտնաբերել ուժեղ կողմերը: Այն նաև որակը սահմանելու միջոց է:

ՄԿԾ-ի պատասխանատունը իր խմբի հետ ՄԿԾ-ի միջազգայնացման և ուսանողների և դասախոսական կազմի շարժունությունն ապահովելու համար պետք է իրականացնի ՄԿԾ-ի բենչմարքինգ նմանատիպ միջազգային այլ ծրագրերի հետ՝ ձգտելով ապահովել համադրելիություն:

Ինչպիսի անմիջական արդյունքներ կարելի է ակնկալել բենչմարքինգից՝

- Վերլուծվում է ՄԿԾ-ների իրականացման գործընթացը
- Համեմատվում են տարբեր բուհերի (տարբեր երկրների) ՄԿԾ-ներ
- Բացահայտվում են ձեռքբերումներն ու թերացումները
- Գնահատվում են այլընտրանքային լուծումները

Ինչպիսի անուղղակի արդյունքներ կարելի է ակնկալել բենչմարքինգից՝

- Ակնհայտ է դարձնում իրականացման գործընթացի համապատասխանությունը պլանավորվածին
- Կանխորոշվում են ՄԿԾ-ի համադրելի դարձնելու եզրերը

Բենչմարքինգի իրականացման համար պետք է պահպանել հետևյալ սկզբունքները՝

- Փոխհամաձայնություն: Բենչմարքինգ իրականացնելու համար այլ բուհից պետք է ձեռք բերել համաձայնության, որը կդարձնի գործընթացը օրինական և տրամադրվող տեղեկատվության սահմանները կլինեն խորը և չափելի, և չի խախտվի գրագողության/հեղինակային ոչ մի կանոն (անհրաժեշտ է միշտ կատարել ցիտումներ, որ տեղեկությունը որտեղից է ձեռք բերված):
- Նույնականություն: Համեմատվող ՄԿԾ-ների ոլորտները, որակավորումը և պրոֆիլը պետք է նույնը լինի:

## Բենչմարքինգի փուլերն են՝

Պլանավորում	Փնտրտուք	Վերլուծություն	Ադապտացում
<ol style="list-style-type: none"> <li>որոշել վերլուծության առարկան, նպատակները, չափանիշները,</li> <li>գտնել գործընկերներ,</li> <li>մշակել բենչմարքինգի պլան,</li> <li>կազմել բենչմարքինգ անող թիմը.</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>հավաքել տեղեկատվություն,</li> <li>գործընկերներին հետ համաձայնության գալ և եթե անհրաժեշտ է կազմել բենչմարքինգի արձանագրություն,</li> <li>պատրաստել հարցաշար, հստակեցնել հասկացությունները, բաժանել հարցաշարերը գործընկերներին,</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Տվյալները վերլուծելիս կազմել աղյուսակներ, դիագրամներ</li> <li>Համեմատվել առաջավոր փորձի հետ և հայտնաբերել ձեր ՄԿԾ-ի բացթողումները</li> <li>Գտնել պատճառները</li> <li>Քննարկել տվյալները</li> <li>Գնահատել բարելավման հնարավորությունները</li> <li>Կատարել SWOT վերլուծություն, առանձնացնել դրական փորձը և բարելավման հնարավորությունները</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Քննարկել բարելավման հնարավորությունները</li> <li>Ընտրել այն ոլորտները, որտեղ բարելավումը հնարավոր է</li> <li>Պատրաստել հաշվետվություն՝ ներառելով առաջարկություններ</li> <li>Մտանալ բուհի ղեկավարության համաձայնությունը բարեփոխումներ իրականացնելու համար</li> <li>Մշակել առաջավոր պրակտիկաների ներդրման համար պլան-ժամանակացույց</li> <li>Հետևել բարեփոխումների ընթացքին</li> <li>Խրախուսել հաջողությունները</li> <li>Տեղեկացնել նախագծի մասնակիցներին ձեռքբերումների մասին</li> </ol>

Այս փուլերը ներկայացնում են բենչմարքինգի անիվը, որը գործում է մշտադիտարկման պայմաններում:

### Բենչմարքինգի վերլուծության փուլից հետո SWOT անալիզի իրականացում

SWOT վերլուծությունը հնարավորություն կտա բացահայտել ՄԿԾ-ի ներքին ուժեղ և թույլ կողմերի ինչպես նաև արտաքին գործոնների՝ հնարավորությունների և վտանգների ուսումնասիրություն իրականացնել:

Արտաքին գործոնների՝ վտանգների և հնարավորությունների ընկալումը՝ զուգակցված ուժեղ և թույլ կողմերի ներքին ուսումնասիրությամբ, թույլ է կտա ՄԿԾ պատասխանատուներին ճիշտ գնահատել իրավիճակը և մշակել ՄԿԾ-ի բարեփոխման ուղիներ:

SWOT վերլուծությունը պետք է ներառի ՄԿԾ-ի բոլոր տարրերը, որոնցից յուրաքանչյուրը կարող է լինել ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների կամ վտանգների աղբյուր:



Շվեդիայի Լինշոփինգի համալսարանի  
պրոֆեսոր Յաներիկ Լունդբլիստը կատարել  
է ուսումնասիրություններ՝ բացահայտելու  
աշխատաշուկան ինչ գիտելիքներով մասնագետների կա  
րիք ունի

Ակնկալվում էր,  
որ պահանջվելու էին խորը մասնագիտական գիտելիքն  
եր և հմտություններ: Համաձայն հետազոտության  
արդյունքների աշխատաշուկայում կարևորվում է  
հետևյալ կարողությունները

1. կարողանալ աշխատել մարդկանց հետ,  
որոնց ատում ես,
2. սեփական գիտելիքները այլոց հետ կիսելու կարողությ  
ուն
3. այլ մշակույթի, այլ ազգի ներկայացուցիչների հետ աշխ  
ատելու ունակություն

Այս պահանջների հիման վրա մշակվեց նոր  
ծրագիր

## Կրթական ծրագրի ուսումնական պլանի քարտեզը

Դասընթաց/ ուսումնական մոդուլ	Ծրագրի կրթական վերջնարդյունքները												
	Ա1	Ա2	Ա3	Ա4	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Գ1	Գ2	Գ3	
Ուս. մոդուլ 1		+								+		+	
Ուս. մոդուլ 2			+		+		+						
Ուս. մոդուլ 3	+	+		+							+		+
Ուս. մոդուլ 4						+		+					
.....			+							+		+	+
Ուս. մոդուլ n					+						+		

Կրթական ծրագրի ուսումնական պլանի քարտեզը Կրթական ծրագրի նպատակներին և վերջնարդյունքներին համապատասխան ծրագրի բովանդակություն ստանալու համար հարկավոր է կառուցել և լրացնել ուսումնական պլանի քարտեզը, որտեղ ուղղահայաց սյունակներում դասավորված են ծրագրի ակնկալվող կրթական վերջանրդյունքները, որոնք պետք է ձևավորվեն տվյալ կրթական ծրագրի շրջանակներում: Յուրաքանչյուր կրթական վերջնարդյունքի և այն ձևավորող հիմնական դասընթացների հատման վանդակում դրվում է **+** կամ **x** նշանը՝ դրանք շաղկապելով միմյանց հետ:

# Constructive Alignment

Intended Learning Outcomes (ILOs)

What should learners know or be able to do?


Teaching Learning Activities (TLAs)

How will the learners learn?

How will learning be measured?

Assessment Tasks

*J.B. Biggs, (2003)*




# Բաժին V

Դասավանդման եվ ուսումնառության  
մեթոդներ



# ԴԱՍԱՎԱՆԴԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԳՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Կրթական վերջնարդյունքների հիման վրա ծրագրերի մշակման և իրականացման հիմնորոշ բաղադրիչներից է դասավանդման և ուսումնառության համարժեք մոտեցումների և մեթոդներ ընտրությունը



"Everybody is a genius. But if you judge a fish by its ability to climb a tree, it will live its whole life believing that it is stupid"

Albert Einstein

Ուսումնառության և դասավանդման մեթոդները պետք է.


Լավագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքներով ձևակերված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը ուսանողների կողմից:

Հաշվի առնեն ուսանողների գիտելիքների և ընդունակությունների տարբեր մակարդակները և լինեն բազմազան:

Խրախուսեն ուսանողների ակտիվությունը, ինքնուրույնությունը և տրամադրեն խմբային աշխատանքի հնարավորություններ, որտեղ հնարավոր է:



Ի՞նչ դասավանդման և ուսումնառության ռազմավարություն և մոտեցումներ ենք ընտրում:



- Շրջված լսարան
- Կինեսթետիկ ուսումնառություն. դերային խաղեր, դերատներ, քվիզեր
- Ուղիղ դասավանդում. պասիվ լսարան, դասախոսը որպես ֆորմալ հեղինակություն
- Անհատականացված դասավանդում. (հանդիպումներ փոքր խմբերում, անհատական ծառայություններ համալսարանի կողմից առաջադիմությունը բարելավելու ուղղությամբ)
- Քննողական ուսումնառություն (inquiry based learning). դասախոսը որպես ֆասիլիտատոր (նախագծեր, իրական դեպքերի ուսումնասիրություններ և լուծումներ)
- Էքսպեդիցիոն ուսումնառություն
- Եվ այլն






Կոլորադոյի քոլեջի քիմիայի երկու ուսուցիչներ՝ Ջոնաթան Բերգմանը և Աարոն Սամսը համարվում են «Շրջված լսարան» մեթոդի առաջամարտիկները: Լինելով գյուղական դպրոցի ուսուցիչներ՝ նրանք աշակերտների բացակայության շատ մեծ խնդիր ունեին: Մի օր նրանք անսպասելիորեն բացահայտեցին, որ կարող են PowerPoint-ի սլայդները ձայնագրել իրենց ձայներով, դարձնել տեսանյութեր և ներբեռնել YouTube-ում, որն այդ ժամանակ նոր էր զարգանում: Այսպիսով, 2007 թ.-ին, նրանք սկսեցին ձայնագրել իրենց դասախոսությունները և տեղադրել առցանց այն աշակերտների համար, ովքեր չէին կարողանում ներկա գտնվել իրենց դասին: Առցանց դասախոսությունները շատ արագ ներգրավեցին այլ աշակերտների, ովքեր սկսեցին նայել այդ տեսանյութերը, քանի որ դա նրանց թույլ էր տալիս ավելի լավ հասկանալ ուսուցիչների կողմից քննարկվող թեմաները, ովքեր արդեն սկսել էին օգտագործել այդ ձայնագրությունները իրենց դասաժամի ընթացքում և ձայնագրում էին իրենց ուսումնական տեսանյութերը: Արդյունքում առաջացավ «Շրջված դասարան» մեթոդը, որը հետագայում լայն տարածում գտավ բոլորում:


# Ուսանողակենտրոն մեթոդների կիրառում

## Ուսումնառության ոճերը



### Տեսողական

Զարգացած է պատկերավոր մտածողությունը: Առավել արագ են սովորում, երբ ցուցադրվում են դիագրամներ, պատկերներ, վիդեո հոլովակներ և այլն:



### Լսողական

Հիմնականում սովորում է լսելով և խոսելով:



### Կինեստետիկ

Սովորում են փորձելով, ֆիզիկական աշխատանք կատարելով, քննարկումների մասնակցելով, շոշափելով, փորձարկելով և այլն:

# Ուսանողակենտրոն մեթոդների կիրառում

## Դասավանդման մեթոդների հիմնական խմբերը

- Թիմային աշխատանք
- Դասախոսություն
- Ջրույց, քննարկում, բանավեճ
- Դերային խաղ
- Դեպքի քննարկում
- SS կիրառմամբ մեթոդներ



## Ուսանողակենտրոն մեթոդների կիրառում

### Թիմային աշխատանք

Մեթոդը ենթադրում է՝

- փոխներգործում՝ թիմերի շրջանում
- միևնույն թեմայի շրջանակներում տարբերակված աշխատանք
- աշխատանքային համախմբված արդյունք, առանձին թիմերի աշխատանքների միավորում

## Թիմային աշխատանք

## Մեթոդի կիրառման նպատակներ

- որոշումների արագ կայացման կարողության զարգացում
- տեսական գիտելիքներով կոնկրետ խնդրի լուծման կարողություն
- ստեղծագործական մտածողության զարգացում
- գիտական երևակայության կատարելագործում
- ակտիվ ունկնդրման կարողությունների զարգացում
- թիմում համագործակցելու հմտությունների զարգացում
- վստահ, համարձակ ինքնադրսևորման հմտությունների զարգացում

## Ուսանողակենտրոն մեթոդների կիրառում

### Դասախոսություն

Դասախոսության խնդիրը գիտելիքի, տեղեկատվության փոխանցումն է ուսանողներին նրանց օգնությամբ, կամ նրանց միջոցով

## Ուսանողակենտրոն մեթոդների կիրառում

### Դասախոսություն

Դասախոսության խնդիրը գիտելիքի, տեղեկատվության փոխանցումն է ուսանողներին նրանց օգնությամբ, կամ նրանց միջոցով

## Ուսանողակենտրոն մեթոդների կիրառում

### Դասախոսություն

#### Տեսակներ.

- Ընդհանրացնող դասախոսություն
- գիտելիքների ամփոփում, ամրապնդում
- Կարճ դասախոսություն
- ներածական և ամփոփիչ նշանակություն ունի տևում է մոտ 10 րոպե
- Ուղղորդված դասախոսություն
- Կինո-վիդեո դասախոսություն

## Ուսանողակենտրոն մեթոդների կիրառում

### Զրույց

- վարպետորեն առաջադրված հարցեր
- ուսանողների՝ արդեն ունեցած գիտելիքների վերհանում, ամրապնդում
- նոր դատողությունների ստեղծում,
- արդեն իմացածի ամրապնդում եզրահանգումների, ընդհանրացումների միջոցով

## Ուսանողակենտրոն մեթոդների կիրառում

### Քննարկում, կամ քանապեճ

- խթանել ուսանողների իմացական հետաքրքրվածությունը
- նպաստել նոր գիտելիքների ձեռքբերմանը մեթոդ/ների կիրառման ընթացքում
- նպաստել ուսանողների՝ սեփական կարծիքը հիմնավորելու, պաշտպանելու կարողությանը
- ապահովել ուսումնասիրվող նյութի ստեղծագործական ընկալումը



# Ուսանողակենտրոն մեթոդների կիրառում

## Դերային խաղ

- գիտելիքների ու հմատությունների ձեռքբերման հետաքրքիր ձև է
- հնարավորություն է տալիս հասկանալ հիմնախնդիրների իրավիճակային դրսևորումները
- դերային խաղի բուն ընթացքից հետո իրականացվում է իրականացվում է **դեբրիֆինգ**

# Ուսանողակենտրոն մեթոդների կիրառում

## Դերային խաղ



Դերային խաղն ուսուցման և հոգեբանության մեջ կիրառվող մեթոդ է: Կրթական ծրագրերում, օրինակ, դասախոսը ուսանողներին կարող է անսպասելի իրավիճակներ առաջարկել, ուր ուսանողներին անհրաժեշտ է ընդունել որևէ դեր կամ տեսակետ, այնուհետև փորձեր անել դա հասունացնելու և ավարտելու: Այն ուսանողները, ովքեր չեն մասնակցում բուն դերային խաղին, ստանձնում են դիտորդի դերը և խաղի ավարտից հետո եզրակացություններ անում: Դերային խաղն արդյունավետ իրականացնելու նախապայամանը առաջարկվող դերային իրավիճակի՝ իրականությանը հնարավորինս մոտ լինելու մեջ է:

Դասախոսը մանրամասն ներկայացնում է իրավիճակի բոլոր կողմերը: Խաղը հաճախ կառուցվում է պոտենցիալ կոնֆլիկտների շուրջ: Այն օգտակար է, երբ փորձ է արվում ցույց տալ, որ նույն թեմայի շուրջ տարբեր մարդիկ կարող են տարբեր կարծիքներ ունենալ

## Մեթոդի արդյունավետությունը

- Մեթոդի արդյունավետությունն այն է, որ ուսանողի ձեռք բերած փորձը պահպանվում է երկար,
- այն գիտելիքների ու հմտությունների ձեռքբերման հետաքրքիր ձև է,
- այն հնարավորություն է տալիս ուսանողներին հիմնախնդիրների իրավիճակային դրսևորումները հասկանալ,

**Դերային խաղի** բուն ընթացքից հետո իրականացվում է դերիֆինգ, որի ժամանակ դասախոսը

- հանում է ուսանողներին դերերից,
- հստակեցնում է տեղի ունեցածը,
- քննարկում է խաղի մասնակիցների սխալները,
- բացահայտում է դիրքորոշումները, զգացմունքները, փոփոխությունները, որոնք առկա էին բուն դերային խաղի ընթացքում,
- ուսանողներին ինքնադիտարկման հնարավորություն է տալիս,
- համադրում է դերային խաղի արդյունքները մեր առաջնային նպատակների հետ,
- ուսանողներ վարքի վերաբերյալ վերլուծություններ է իրականացնում,
- առաջադրում է մտածելու նոր թեմաներ,
- կապում է դերային խաղը ուսանողների կողմից յուրացված տեսական նյութերի հետ:

# Ուսանողակենտրոն մեթոդների կիրառում

## SS կիրառմամբ մեթոդներ

Ընդգծելով նմանատիպ մեթոդների բազմազանությունը անդրադառնանք նման մեթոդների կիրառման օրինակների:

- ✓ Տեսահոլովակի վերլուծություն, նկարահանում
- ✓ Ուսանողը և/կամ դասախոսը որպես «բլոգեր»
- ✓ Վիրտուալ բովանդակության ստեղծում (wiki, wikipedia և այլն)
- ✓ Ներկայացումների պատրաստում հարուստ վիզուալ պատկերներով
- ✓ Վիրտուալ քննարկումներ, ֆորումներ (առցանց կամ ցանցից դուրս)

# Քվիզներ

The image shows a screenshot of a Google Forms quiz editor. The top navigation bar is purple and contains a back arrow, the title "Sample Quiz #9", a folder icon, a star icon, and the text "All changes saved in Drive". On the right side of the bar are icons for settings, a smiley face, a camera, a gear, a "SEND" button, and a user profile picture.

Below the navigation bar, there are two tabs: "QUESTIONS" (which is selected and underlined) and "RESPONSES".

The main content area displays the title "Sample Quiz #9" and a "Form description" section. The description text reads: "This form is automatically collecting email addresses for FreeTech@teachers.com users." followed by a "Change settings" link.

The quiz question is: "Who was the first president of the United States?" with a point value of "5 points".

There are two radio button options for the question:

- Jefferson
- Lincoln

On the right side of the question area, there is a vertical toolbar with icons for adding a question (+), text (T), image (img), video (video), and a question mark icon.

Who was the first president of the United States?

5 points

- Jefferson
- Lincoln
- Washington

What is the tallest mountain in the world?

5 points

Your answer

SUBMIT

Never submit passwords through Google Forms.

This form was created inside of [Freotech4teachers.com](https://www.freotech4teachers.com). [Report Abuse](#) - [Terms of Service](#) - [Additional Terms](#)

Who was the first president of the United States? 5 points

- Jefferson
- Lincoln
- Washington

What is the tallest mountain in the world? 5 points

Your answer \_\_\_\_\_

SUBMIT

Never submit passwords through Google Forms.

This form was created inside of [Freetech4teachers.com](https://www.freetech4teachers.com). [Report Abuse](#) - [Terms of Service](#) - [Additional Terms](#)





Օրինակ, եթե որպես դասավանդման ձև ընտրված է դասախոսությունը, ապա այդ հանգամանքը հնարավորինս կոնկրետացվի և պարզաբանվի: Բավարար չէ նշել, որ դասընթացի յուրացման համար օգտագործվելու են դասախոսությունները: Նախընտրել է մանրամասնել, որ դասընթացի հիմնական մասը յուրացվելու է դասախոսի կողմից հանձնարարված գրականության ընթերցման արդյունքում: Օգտագործվելու են նաև դասախոսությունները՝ հանձնարարված նյութի հիմնական աղբյուրները լրացնելու, ուսանողներին անհասկանալի դրույթները բացահայտելու և պարզաբանելու, ինչպես նաև նրանց քննադատաամ մտածողություն զարգացնելու համար:

# Բաժին VI

Ուսանողների չափանիշաին գնահատումը






Ուսանողների չափանիշահեն  
գնահատումը  
Գնահատման այս մոտեցումը  
հնարավորություն է ընձեռում  
փոխկապակցելու դասընթացի  
ակնկալվող վերջնարդյունքները,  
գնահատման գործընթացը և  
ուսումնառության և դասավանդման  
մեթոդները:



Արդյունավետ գնահատման առանցքային սկզբունքները և գնահատման համակարգերի ընդհանուր թերությունները հիմնականում վերաբերում են վերջնարդյունքների հետ կապին, գնահատման առաջադրանքի մշակմանը, չափանիշներին, թվանշան գործընթացին և հետադարձ կապին:

(Բրաուն, 2001)



**Նկար 10. Դասընթացի կրթական վերջնարդյունքների սահմանման և դասավանդման, ուսումնառության ու գնահատման ձևերի ու մեթոդների որոշման ընթացակարգը**

# Գնահատումը դասախոսի և ուսանողի տեսանկյունից

Դասախոսի  
տեսանկյուն

Նպատակներ



Կրթական  
վերջնարդյունքներ



Դասավանդում



Գնահատում



Ուսանողի  
տեսանկյուն

Գնահատում



Ուսումնառություն



Կրթական  
վերջնարդյունքներ



### Արդյունավետ գնահատման սկզբունքները

Չափանիշների և չափորոշիչների վրա հիմնված գնահատումն ապահովում է հետևյալ կարևորագույն սկզբունքների իրականացումը.

- ✓ Ներառում է դասավանդման, ուսումնառության և գնահատման շարունակական բարելավման մեխանիզմներ,
- ✓ Ուղղորդում և խրախուսում է ուսանողի ուսումնառությունը,
- ✓ Սահմանում և պահպանում է ակադեմիական չափանիշները:

## Գնահատման չափանիշների ձևակերպումը



Չափանիշները սահմանում են ուսանողի կատարողականի հիմնական բնութագրիչները գնահատման գործընթացում: Դրանք նաև նկարագրում են, թե գնահատման առաջադրանքում ինչ պետք է անի ուսանողը դասընթացի կրթական վերջնարդյուքները դրսևորելու համար: Գնահատման չափանիշները սովորաբար ձևակերպվում են որպես համառոտ նկարագրություններ: Օրինակ, եթե գնահատվում է էսսե գրելու ուսանողի կարողությունը, ապա չափանիշը կարող է ձևակերպվել այսպես՝

**ցուցադրել հանձնարարված գրականության հիմնական դրույթները վերլուծելու, ամբողջականացնելու, հիմնական միտքը շարադրելու և հղումներ անելու կարողություն:** Այս չափանիշի պահանջները կարող են կատարվել որակական տարբեր մակարդակներում, որոնք սահմանվում են գնահատման **չափորոշիչներով:**



**Չափորոշիչների** ձևակերպումները  
կարող են տարբեր լինել, սակայն,  
որպես կանոն, դրանք սահմանվում  
են մեկ նախադասությամբ և  
պարունակում են համառոտ, բայց  
բավարար տեղեկությունը  
ուսանողի գիտելիքը որոշելու  
համար:



# Գնահատման չափորոշիչները և դրանց սահմանումը



Հստակ սահմանված չափորոշիչները պետք է պարզ և հասկանալի ձևով ուսանողին ներկայացնեն, թե ինչպես է գնահատվելու գիտելիքի իր մակարդակը:

Չափորոշիչի մշակման և սահմանման հիմնական խնդիրն է նկարագրել գնահատման առաջադրանքի կատարման համար ակնկալվող որակական մակարդակները գնահատման յուրաքանչյուր չափանիշի համար:

## Կրթական վերջնարդյունքների և գնահատման համապատասխանեցման օրինակ

ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ	ԳՆԱՀԱՏՈՒՄ
1. Դրսևորել ելույթ ունենալու հմտություններ	ա) Պատասխանել բազմակի ընտրության հարցերի
2. Որոշել նյութի ֆիզիկական հատկությունները	բ) Պատրաստել 1000-բառանոց հետազոտական առաջարկ
3. Ձևակերպել հետազոտական հիմնախնդիր	գ) Կատարել լաբորատոր աշխատանք
4. Բացահայտել տվյալ հիվանդության հայտանիշները և ախտանշանները հիվանդի մոտ	դ) Ելույթ ունենալ լսարանի առջև

# Գնահատման ձևերը ու մեթոդները և դրանց ընտրությունը

Գնահատումը պետք է դիտարկել ոչ միայն որպես դասավանդման ու ուսումնառության ժամանակաշրջանի արդյունքների ամփոփում, այլև նաև որպես այդ գործընթացն ուղղորդող բաղադրիչ: Առարկայական համատեքստը նույնպես էական նշանակություն ունի գնահատման ձևերի ու մեթոդների ընտրության համար: Անհրաժեշտ է հաշվի առնել գնահատման նպատակը, գրագողության հնարավորությունների նվազեցման, ինչպես նաև գնահատման ընթացքի արդարացի ժամանակի հաշվառման անհրաժեշտությունը:

Կրթական վերջնարդյունքների տարատեսակությունը հանգեցնում է գնահատման մեթոդների բազմազանության: Գնահատման արդյունավետության երաշխավորման համար կարևոր նշանակություն ունի նաև գնահատման առաջադրանքի կատարման իրատեսական ժամանակի որոշումը:





- Գիտելիքի կամ հմտության թեստավորում
- Բանավոր պրեզենտացիաներ
- Լաբորատոր հաշվետվություններ
- Տվյալների վերլուծություն
- Հմտությունների ներկայացում, օրինակ՝ սրակտիկայի վայրում.
- Աշխատանքի վայրից հաշվետվություններ.
- Պրոֆեսիոնալ պորտֆոլիո
- Դաշտային աշխատանքների հաշվետվություններ
- Էսսեներ, հաշվետվություններ, գրականության ուսումնասիրություն, քննադատական ակնարկ տարրեր հետազոտական նյութերի վերաբերյալ



# Կրթական վերջնարդյունքներին համապատասխան ընտրված գնահատման մեթոդների օրինակներ

Կրթական վերջնարդյունք	Գնահատման մեթոդ
<p><b>1. Գիտելիք և իմացություն</b> արտահայտել, պատմել, նկարագրել, ներկայացնել, վերարտադրել, թվարկել, անվանել, ռիշել, վերհիշել, մտապահել, ցույց տալ, պարզաբանել, մեկնաբանել, որոշել, սահմանել, նկատել, բացատրել, քննարկել, ճանաչել, շինարարել, ընտրել, մատնանշել, լուսաբանել, յասակարգել և այլն)</p>	<ul style="list-style-type: none"> <li>▪ Գրավոր քննություն</li> <li>▪ Բանավոր քննություն</li> <li>▪ Էսսե</li> <li>▪ Չեկոյց</li> <li>▪ Գրառումների վերաբերյալ մեկնաբանություններ</li> <li>▪ Բարձրացված հարցադրումներին գրավոր պատասխան</li> <li>▪ Կարճ պատասխաններ պահանջող հարցեր,</li> <li>▪ Ճիշտ/սխալ/բազմակի ընտրության հարցեր (թղթային կամ համակարգչային ձևաչափով)</li> </ul>
<p><b>2. Հաղորդակցվել</b> միակողմանի և երկկողմանի հաղորդակցում, աղորդակցում խմբի ներսում, բանավոր և գրավոր հաղորդակցում, բանավիճում, փաստարկում, նկարագրում, պաշտպանություն, հարցադրույց, բանակցում, ներկայացում, գրավոր ձևափերի օգտագործում և այլն)</p>	<ul style="list-style-type: none"> <li>▪ Գրավոր ներկայացում (էսսե, զեկոյց, հոդված և այլն)</li> <li>▪ Բանավոր ներկայացում</li> <li>▪ Խմբային աշխատանք</li> <li>▪ Քննարկում/բանավեճ/դերախաղ</li> <li>▪ Ներկայացում կինոխցիկի առջև</li> </ul>
<p><b>3. Քննադատորեն մտածել և դատողություններ անել</b> բերել փաստարկներ, անդրադարձ կատարել, յնահատել, արժևորել, դատել և այլն)</p>	<ul style="list-style-type: none"> <li>▪ Էսսե</li> <li>▪ Չեկոյց</li> <li>▪ Գրախոսություն</li> <li>▪ Հոդված</li> </ul>
<p><b>4. Լուծել խնդիրներ և մշակել նախագծեր</b> բացահայտել/ձևակերպել/սահմանել խնդիրներ, վերլուծել տվյալներ, կատարել փորձաքննություն, մշակել և կատարել փորձեր, պլանավորել, օգտագործել տեղեկատվություն և այլն)</p>	<ul style="list-style-type: none"> <li>▪ Խնդրի լուծման տարբերակների կազմում</li> <li>▪ Խմբային աշխատանք</li> <li>▪ Նախադեպերի վերլուծություն</li> <li>▪ Գիտական հոդվածի պատրաստում</li> </ul>
<p><b>5. Տեղեկատվություն հայթայթել և կառավարել</b> ուսումնասիրել/հետազոտել, հետաքննել, մեկնաբանել, հավաքել տեղեկատվություն, փորձաքննել և ձևափոխել տեղեկատվություն, ովյալներ հավաքել, փնտրել ու դիտարկել տեղեկատվության զանազան աղբյուրներ և այլն)</p>	<ul style="list-style-type: none"> <li>▪ Գրականության ցանկ համապատասխան հղումներով</li> <li>▪ Նախագիծ</li> <li>▪ Ատենախոսություն</li> <li>▪ Ինքնուրույն առաջադրանք</li> <li>▪ Կիրառական խնդիր</li> </ul>

**Օրինակ.** Սահմանված գնահատման չափանիշի համար անցողիկ և միջանկյալ մակարդակների չափորոշիչների որոշում:

Օրինակ, եթե գնահատվում է ուսանողի էսսե կամ զեկույց գրելու կարողությունը, ապա չափանիշը կարող է ձևակերպվել այսպես. «*ցուցաբերել հանձնարարված գրականության հիմնական դրույթները վերլուծելու և ամբողջականացնելու, հիմնական միտքը շարադրելու և հղումներ կատարելու կարողություն*»:

Մակարդակ	Չափորոշիչեր
« <i>Անբավարար</i> »	Փոքր ինչ ծանոթ կամ անծանոթ է հանձնարարված կամ տիպական գրականությանը (տեքստերին), հիմնվում է հիմնականում ոչ գրախոսվող համացանցային աղբյուրների վրա, հղումները բացակայում են:
« <i>Բավարար</i> »	Հիմնականում հիմնվում է հանձնարարված կամ տիպական գրականության վրա՝ այլ աղբյուրներին նվազագույն հղումներ կատարելով կամ առանց հղումների:
« <i>Բավարարից բարձր</i> »	Համապատասխանում է «բավարար» շեմին, սակայն էսսեում տեղ են գտել նաև որոշ հղումներ համարժեք գրականությունից:
« <i>Լավ</i> »	Համապատասխանում է նախորդ շեմին, ի հավելումն օգտագործում է նաև համարժեք գրականության մեծ ցանկ և վերջին հետազոտություններից ստացված տվյալներ:
Մակարդակ	Չափորոշիչեր
« <i>Գերազանց</i> »	Համապատասխանում է «լավ» շեմին, ի հավելումն առաջարկում է գրականությունից ստացված գաղափարների նոր ընկալում: Տարբերակում է աղբյուրներն ըստ որակի և օգտագործում ոչ տիպական, բայց համարժեք աղբյուրներ:

Գնահատման չափանիշները	Գնահատման չափորոշիչները			
	Անբավարար	Բավարար	Լավ	Գերազանց
<b>Խոսքի տրամաբանական կառուցվածքը</b>	Լսարանը չի կարողանում հասկանալ նյութը, քանի որ չկա մտքերի տրամաբանական հաջորդականություն:	Լսարանը դժվարությամբ է հետևում մտքերի ընթացքին, քանի որ խոսքի տրամաբանական շղթան հաճախ ընդհատվում է:	Ուսանողի մտքերն աչքի են ընկնում տրամաբանական հաջորդականությամբ, և լսարանը կարողանում է հետևել խոսքի ընթացքին:	Ուսանողի մտքերն ունեն տրամաբանական կուռ կառուցվածք, հետաքրքիր ընթացք, բերված օրինակները դիպուկ են և ուշագրավ, լսարանը ներգրավված է և հետաքրքրված:
<b>Առարկայի իմացությունը</b>	Ուսանողի իմացությունը թերի է, չի կարողանում հարցերին սպառիչ պատասխաններ տալ:	Ուսանողը նյութը լավ չի յուրացրել և կարողանում է պատասխանել միայն տարրական հարցերին:	Ուսանողը հեշտությամբ է գտնում բոլոր հարցերի պատասխանները, սակայն դրանք չի կարողանում հիմնավորել:	Ուսանողն ունի հիմնարար գիտելիքներ, տալիս է սպառիչ պատասխաններ՝ մեկնաբանություններով և գաղափարական նոր մոտեցումներով:
<b>Ցուցադրական նյութը</b>	Ուսանողը չի օգտագործում ցուցադրական նյութ, գծապատկերներ, որոնք անհրաժեշտ են նյութը հասկանալի դարձնելու համար:	Ուսանողն օգտագործում է ցուցադրական նյութ և գծապատկերներ, որոնք հազվադեպ են լրացնում տեսքերը և ելույթը:	Ուսանողի ներկայացրած ցուցադրական նյութը և գծապատկերներն ատնչվում են տեսքերին և ելույթին, սակայն թերի կողմերը շտկելու անհրաժեշտություն կա:	Ուսանողը մեկնաբանում է ցուցադրական նյութն ու գծապատկերները և դրանցով ավելի բովանդակային դարձնում խոսքը: Բոլոր տեսողական պատկերներն արտահայտիչ են և նպաստում են նյութի ընկալմանը:



Գնահատման չափանիշները	Գնահատման չափորոշիչները			
	Անբավարար	Բավարար	Լավ	Գերազանց
<b>Լեզվամտածողությունը</b>	Ուսանողը ելույթի ընթացքում թույլ է տալիս քերականական և (կամ) արտասանական 4 և ավելի սխալ:	Ուսանողը ելույթի ընթացքում թույլ է տալիս քերականական և (կամ) արտասանական 3 սխալ:	Ուսանողը ելույթի ընթացքում թույլ է տալիս 2 և ոչ ավելի քերականական և (կամ) արտասանական սխալ:	Ուսանողի խոսք գրագետ է, չկան քերականական (կամ) արտասանական սխալներ:
<b>Կապը լսարանի հետ</b>	Ուսանողի զեկույցը անկենդան է, բացակայում է կապը լսարանի հետ:	Ուսանողը մեծ մասամբ ընթերցում է զեկույցը, երբեմն երբեմն փորձում է կապ հաստատել լսարանի հետ:	Ուսանողը մեծ մասամբ պահպանում է կապը լսարանի հետ, սակայն հաճախ անդրադառնում է գրառումներին:	Ուսանողը պահպանում է կապը լսարանի հետ՝ հազվադեպ անդրադառնալով գրառումներին:

**Գասընթացի/ուսումնական մոդուլի կրթական վերջնարդյունքներն ու գնահատման ձևերը/մեթոդները.**

*Գասընթացի/ուսումնական մոդուլի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.*

*Ուսանողը դրսևորում է ձեռքբերած գիտելիքը, իմացությունը և կարողությունները գնահատման հետևյալ ձևերի/մեթոդների օգնությամբ.*

**Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն.**

**Գնահատման ձևերը/մեթոդները.**

- 1. \_\_\_\_\_
- 2. \_\_\_\_\_
- 3. \_\_\_\_\_
- 4. \_\_\_\_\_
- 5. \_\_\_\_\_
- 6. \_\_\_\_\_

- 1. \_\_\_\_\_
- 2. \_\_\_\_\_
- 3. \_\_\_\_\_
- 4. \_\_\_\_\_
- 5. \_\_\_\_\_
- 6. \_\_\_\_\_

**Բ. Գործնական մասնագիտական կարողություններ.**

**Գնահատման ձևերը/մեթոդները.**

- 1. \_\_\_\_\_
- 2. \_\_\_\_\_
- 3. \_\_\_\_\_
- 4. \_\_\_\_\_
- 5. \_\_\_\_\_
- 6. \_\_\_\_\_

- 1. \_\_\_\_\_
- 2. \_\_\_\_\_
- 3. \_\_\_\_\_
- 4. \_\_\_\_\_
- 5. \_\_\_\_\_
- 6. \_\_\_\_\_

**Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ.**

**Գնահատման ձևերը/մեթոդները.**

- 1. \_\_\_\_\_
- 2. \_\_\_\_\_
- 3. \_\_\_\_\_

- 1. \_\_\_\_\_
- 2. \_\_\_\_\_
- 3. \_\_\_\_\_



Կիրառվում է ուսանողների գնահատման երկու հիմնակ ձև՝ այսպես կոչված ձևավորող /formative/, որը նախատեսված է ուսումնառության միջանկյալ փուլերում դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացների բարելավման նպատակովան ուսանողների հետ հետադարձ կապ հաստատելու համար և եզրակափակի /summative/, որը նախատեսված է դասընթացի ավարտին ուսանողների գիտելիքներ գնահատման և կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը չափելու համար:

Ձևավորող գնահատումը ներառում է դասախոսի հետ հետադարձ կապի որոշակի մեխանիզմներ՝ գնահատականի վերաբերյալ դասախոսի մեկնաբանություններն ու առաջարկությունները:

Այն դասախոսին հնարավորություն է ընձեռում դեռևս ուսուցման փուլերում տեղեկատվություն ստանալ դասավանդման և ուսումնառության արդյունավետության և ուսանողների ընթացիկ կատարողականի վերաբերյալ:

## Գնահատման երկու ձևերը



- **Չնափորող գնահատում**, որը նախատեսված է ուսումնաստության միջանկյալ փուլերում՝ գնահատման և դասավանդման գործընթացի բարելավման նպատակով ուսանողների հետ հետադարձ կապ ապահովելու համար:
- **Եզրափակիչ գնահատում**, որը նախատեսված է ուսումնաստության ավարտին ուսանողների գնահատման և նրանց կողմից ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը չափելու համար:

## Չնափորող (ախտորոշիչ) գնահատում

### ԳՆԱՀԱՏՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



Չնափորող գնահատման նպատակն է **ԲԱՐԵԼԱՎԵԼ** որակը

